



**«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի
EduArmenia կրթական նախաձեռնություն**

**Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց 2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպե՞ս ձևավորող գնահատման ռազմավարությունների միջոցով նպաստել ավագ դպրոցի սովորողների մոտ ուսումնառության արդյունավետության բարձրացմանը

**Հետազոտող ուսուցիչ՝ Վարդուհի ԱՏյան
(Երևանի Եվրասիա ավագ դպրոց-վարժարան)**

ԵՐԵՎԱՆ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....	4
ԳՆԱՅԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿ	7
ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՂ.....	8
ՍՈՎՈՐՈՂԸ ՈՐՊԵՍ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ.....	9
ՁԵՎԱԿՈՐՈՂ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՏԵՍԱԿ.....	10
ԻՆՉ Է ՁԵՎԱԿՈՐՈՂ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ	15
ՁԵՎԱԿՈՐՈՂ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՀՆԱՐՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ	16
ՁԵՎԱԿՈՐՈՂ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.....	20
ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՆԱՅԱՏՈՒՄ.....	27
ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.....	28
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	29
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլորս էլ հանճար ենք:

*Բայց եթե ձկանը դատեք իր` ծառ ելնելու կարողությամբ,
ապա նա ամբողջ կյանքը կապրի` իրեն համարելով հիմար:*

Ա. Էյնշտեյն

Այս թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ կրթական համակարգում ուսումնասիրության արդյունքների գնահատումը համարվում է մանկավարժական գործունեության բարդ և պատասխանատու տեսակներից մեկը: Դրա իրականացման արդյունքում ուսուցիչը կարող է ամբողջական պատկերացում ունենալ ուսումնական գործընթացում իր հիմնական նպատակների իրագործման մասին: Գնահատումը պետք է նաև օգնի աշակերտին զարգացնել համարժեք ինքնագնահատական, ինքնահարգանք, ինքնավստահություն և անձնական հաջողություն: Այսօր ուսուցչի առջև խնդիր է դրված ոչ թե երեխային փոխանցել որոշակի քանակությամբ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, այլ ձևավորել այնպիսի կարողունակություններ, որոնք թույլ կտան նրան հաջողությամբ սովորել ապագայում և զարգացնել ինքնուրույնություն կրթական գործընթացներում:

Թեև գնահատումը կարևոր է դպրոցի բոլոր կրթական աստիճաններում, սակայն ավագ դպրոցում սովորողների տարիքային առանձնահատկությունների բերումով այստեղ այն յուրահատուկ նշանակություն ունի: Այս տարիքում սովորողները նախ շատ զգայուն են գնահատման սխալների նկատմամբ, երկրորդ` շատ բաների բոլորովին այլ տեսանկյունից են նայում և հաճախ հնարավոր ոչ համարժեք գնահատական են տալիս և երրորդ` նրանք ապրում են գնահատման տեսանկյունից շատ բազմազան աշխարհներում` երիտասարդական ենթամշակութային խմբերում, որոնք, որպես կանոն, հակադրվում են գնահատման համընդհանուր սկզբունքներին: Ավագ դպրոցի մանկավարժների պարտականությունը սովորողներին ոչ թե սոսկ գնահատելն է` գաղտնի պահելով, թե ինչպե՞ս և ինչու` Է դա արվել, այլ բացատրելը, մեկնաբանելը, հիմնավորելը, թե ինչպես է կատարվում յուրաքանչյուր գնահատում, ինչու` Է այն կարևոր, ինչպես է այն դասակարգում տարբեր որակական հատկանիշներ: Ավագ դպրոցի ուսուցիչը երկակի աշխատանք պետք է կատարի, ոչ միայն գնահատի, այլ նաև աշակերտին սովորեցնի ինքնագնահատել: Ավագ դպրոցն առանձնահատուկ է, քանի որ այն ավարտելուց հետո սովորողներն ինքնուրույն կյանք են մտնում: Ուստի առօրյա կյանքում, ընդունելության քննությունների ժամանակ, գործունեության տարբեր ոլորտներում հաջողության հասնելու համար նրանք պետք է դպրոցական տարիներին լավ պատրաստվեն, իրենց մասին իրական, ճշգրիտ պատկերացում կազմելու և գոյություն ունեցող հասարակական կյանքը հասկանալու հմտություն ձևավորել, երևույթներին փորձեն նայել Տեսի-ի շրջանակներից դուրս, երրորդ աչքով:

Ժողովրդավարական կրթությունը թերի է առանց համարժեք և համապատասխան գնահատման, որը պետք է ոչ միայն վերահսկման գործիք լինի, այլ նաև թերությունների բացահայտման, ինքնահաստատման և կատարելագործման: Գնահատման փաստն ինքնին հանգեցնում է նրան, որ անընդհատ պարտադիր կերպով ուշադրության կենտրոնում հարկ է պահել հավասարության և արդարության խնդիրները: Թվում է, թե ներկայիս գնահատման 10 միավորանոց համակարգը, որը մինևույն չափանիշներն է պահանջում բոլոր սովորողներից, ապահովում է հավասար պայմաններ: Սակայն այդ հստակ չափանիշներն ու կադապարները հաշվի չեն առնում յուրաքանչյուր սովորողի անհատական մտային ու ֆիզիկական կարողությունները: Այսինքն` կարծես թե հավասար մրցակցություն ապահովելու նպատակով արդար լինելու համար բոլոր կենդանիներին տալիս ենք նույն առաջադրանքը` բարձրանալ ծառը: Այսինքն` նախապես տարբեր, ոչ հավասար

պայմաններում գտնվող աշակերտների առջև դրվում է նույն խնդիրը, ինչն էլ անհավասարության պատճառ է դառնում:

Չեռազոտական աշխատանքի նպատակը՝

- Ուսումնասիրել ձևավորող գնահատման ռազմավարությունների կիրառման արդյունքում սովորողների ուսուցման որակի փոփոխությունները,
- Վերլուծել ձևավորող գնահատման դերը սովորելու մոտիվացիայի բարձրացման մեջ:

Չեռազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
- պարզել՝ ինչ ասել է՝ ձևավորող գնահատում, դրա բովանդակությունը, ռազմավարությունները, հնարները,
- բացահայտել ձևավորող գնահատման դերն ու նշանակությունը ավագ դպրոցի սովորողների ուսումնառության արդյունավետության բարձրացման գործընթացում:

Չեռազոտական հարցեր՝

- Ինչպե՞ս կարելի է ձևավորող գնահատման միջոցով նպաստել սովորելու մոտիվացիայի բարձրացմանը:
- Ի՞նչ գործոններ են ազդում ձևավորող գնահատման ռազմավարությունների կիրառման արդյունքում սովորողի մոտիվացիայի բարձրացման վրա:
- Ձևավորող գնահատումը ի՞նչ հնարավորություն է ստեղծում սովորողի և ուսուցչի համատեղ աշխատանքում ուսման որակի բարձրացման համար:
- Ինչպե՞ս կարելի է ձևավորող գնահատման ռազմավարությունների կիրառման միջոցով ապահովել սովորողների մոտ այն գաղափարը, որ իրենք են պատասխանատու իրենց ուսումնառության համար:

Չեռազոտության վարկած՝

Ձևավորող գնահատումը կարելի է անվանել գնահատում հանուն սովորողի և ուսումնական գործընթացի բարելավման:

ԳՐԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

Գնահատումը ցանկացած հասարակության կյանքի կարևորագույն հիմնախնդիրներից է: Շատ խնդիրներ ու թյուրիմացություններ են ծագում այն պատճառով, որ մարդիկ համարժեք չեն գնահատում, գնահատվում կամ ունեն ինքնագնահատման կարողության պակաս: Գնահատումը ոչ թե միայն զուտ կրթական, այլ կյանքի բոլոր բնագավառներին առնչվող հասկացություն է: Հայկական ժողովրդական մի հեքիաթ կա, որը ապագա հարսին որակելու մասին է: Ապագա ամուսնու ծնողները գնում են հարսի տուն՝ տեսնելու, թե նա ինչպես է ուտում: Ծնողների կարծիքով, եթե աղջիկն արագ ու հաճույքով է ուտում, նույն արագությամբ ու հաճույքով էլ կաշխատի և կդիմակայի դժվարություններին: Սա,

անշուշտ, հեքիաթ է, և դժվար է ասել, թե որքանով հիմնավոր և արժանահավատ է այս գնահատումը: Բայց հեքիաթում ակնարկ կա այն մասին, որ կյանքի յուրաքանչյուր բնագավառում ամեն բան սկսվում և շարունակվում է գնահատումով: Քանի որ երևույթը ճիշտ ընկալելու համար մարդիկ նախ փորձում են գնահատել, ուստի առավել կարևոր է անաչառ, արդար գնահատելու հմտությունը: Անշուշտ, գնահատողների մեջ ամենակարևորը մանկավարժներն են, ուստի գնահատման նոր դերը հասկանալը նրանց համար կենսական անհրաժեշտություն է: Կրթական չափորոշիչների նոր պարադիգմի համաձայն՝ գնահատումը նախատեսված է ուսումնառությունը խթանելու, այլ ոչ թե արգելակելու համար: Գնահատման նոր համակարգը ենթադրում է հետևյալ ելակետերը.

- Հաճախակի գնահատում, նախընտրելի է յուրաքանչյուր դասին,
- Յուրաքանչյուր աշխատանքի գնահատման հստակ չափանիշների մշակում՝ ծրագրված արդյունքների հիման վրա.
- Ելնելով ժամանակակից կրթական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի առաջատար դերից՝ սովորողների կրթական նվաճումների գնահատման մեթոդների և միջոցների ընտրության համատեքստում հիմնական շեշտը դրվում է ինքնագնահատման վրա:

Գնահատման գործընթացում մեր հիմնական խնդիրն է՝ ավելի շատ ուղղորդել սովորողներին՝ բարելավելու իրենց կրթական գործունեությունը, խորացնել և ամրապնդել ուսման շարժառիթները, ամրապնդել սովորողների հավատը սեփական ուժերի նկատմամբ՝ ներգրավելով նրանց հաղորդակցության համագործակցային ձևերին և զարգացնելով նրանց մեջ ինքնուրույնությունն ու ազատ ընտրության զգացումը: Սովորողների ուսումնական նվաճումների գնահատման մեթոդների և միջոցների ընտրության շեշտադրումը հիմնված է ինքնագնահատման վրա: Յուրաքանչյուր աշակերտ յուրովի է արձագանքում այն բանին, թե ինչն է իրեն հաջողվում սովորել, ինչը՝ չի հաջողվում, և յուրովի է ընկալում իր ուսումնական աշխատանքի գնահատականը: Այսպիսով, ի՞նչ է գնահատականը:

Հանրակրթական պետական չափորոշիչի համաձայն՝ գնահատումը կամ ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:


Գնահատումը համալիր գործընթաց է, ուսումնական գործընթացում քանակական ու որակական տվյալների նպատակային հավաքումն է: Գնահատումը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.





Համաձայն հանրակրթության մասին օրենքում ուսումնական հաստատության սովորողների գնահատման չափանիշների.

- Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:
- Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:
- Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:
- Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:
- Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման հետևյալ տեսակները.



Գնահատման նպատակը


Ուսուցման ավանդական համակարգում կրթության կարևորագույն արդյունքը ուսման առաջադիմությունն էր, ուստի գնահատման իմաստը պարզապես բովանդակային գիտելիքների ծավալը որոշելն էր: Այն աշակերտները, որոնք տեսական լավ պատրաստվածություն ունեին, համարվում էին դպրոցի լավագույն ներկայացուցիչները: Բայց իրական կյանքում նրանք երբեմն անհաջողության էին մատնվում: Մինչդեռ ուրիշները, որ դպրոցական տարիներին գնահատվելու հույս անգամ չունեին, շատ հաջողակ էին լինում հետագա կյանքում: Գոյություն ուներ նույնիսկ բարձր առաջադիմություն ունեցող, բայց իրական կյանքում անճարակ աշակերտների կարծրատիպ: Բազմաթիվ լավ ուսուցիչներ հասկանում էին , որ գնահատումը պետք է լինի բազմակողմանի և ամբողջական՝ ներառելով ոչ միայն տեսական գիտելիքներ , այլ նաև այնպիսի հմտությունների արժևորում, ինչպիսիք են, օրինակ ճնշմանը դիմանալը, ինքնակառավարումը, վստահությունը սեփական ուժերին, սեփական դիրքորոշումն ու վերաբերմունքը որոշակի հարցերի նկատմամբ և այլն:

Պատշաճ գնահատման խնդիրն է օգնել սովորողներին հասնելու իրենց առջև դրված նպատակներին և դա հաճույքով անել:

Ռ. Սթիգլիսը գրում է, որ ավագ սերնդի ներկայացուցիչների մեծ մասը մեծացել է այնպիսի դպրոցներում, որտեղ ուսուցիչները հավատացած էին , որ ուսումնառության առավել արդյունավետության հասնելու ուղին աշակերտների անհանգստությունը մեծացնելն է: Գնահատումը միշտ էլ վախ է ներշնչել: Այդ պատճառով չափահասներից շատերը այսօր էլ այն զգացումն ունեն, որ գնահատումը վտանգավոր գործ է: Այս առումով ուսուցիչները սխալվում էին, քանի որ ճանաչողության ընթացքում մարդկային ուղեղի կենսաբանական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբ ուղեղն անհանգիստ ու լարված վիճակում է, այն ի պաշտպանություն կծկվում և փակվում է: Այդ վիճակում դժվար է որևէ նոր բան տեսնել, հասկանալ , առավել ևս՝ սովորել:

Եթե մանկավարժներն ուզում են աշակերտների ուսումնառության արդյունավետություն,- շարունակում է Սթիգլիսը,- նրանք պետք է ունենան ճիշտ հակառակն այն բանի, ինչն անում էին նախկին ուսուցիչները. պետք է աշակերտների միջից հանել ճախողման տագևապը:

Սթիգլիսն արդյունավետ գնահատման համար հետևյալ սկզբունքներն է առաջարկում, որոնց միջոցով գնահատումը հասնում է իր նպատակին՝ սովորողի առավելագույն հաջողությանը:



Ուսուցիչը որպես գնահատման նախագծող

Թեև գնահատման գործընթացում շատ գործող անձինք կան, բայց գնահատման հիմնական նախաձեռնողն ուսուցիչն է: Նույնիսկ եթե նա օգտագործում է գնահատման արդեն ձևավորված տեսակներ, այնուամենայնիվ, ուսուցիչն ինքն է ընտրում, թե դրանցից որ մեկն օգտագործի՝ հաշվի առնելով տվյալ թեմայի, դասի կամ գործնական վարժության նպատակը և դասարանի առանձնահատկությունները:

Գնահատումը սովորողի ուսումնառության մասին տվյալներ հավաքելու գործընթաց է, որի նպատակը դասավանդումը կատարելագործելու մասին որոշումների ընդունումն է:

Դասարանում արդյունավետ աշխատելու համար ուսուցիչը պետք է կարողանա գնահատումը ճիշտ կատարել: Դա նշանակում է, որ նրան պետք է.

- Ստույգ տեղեկություններ հավաքել աշակերտների ձեռքբերումների և առաջադիմության մասին
- Դասավանդման գործընթացում այնպես միահյուսել գնահատումն ու դրա արդյունքները, որ սովորողներն օգուտ ստանան դրանից, այսինքն՝ ոչ թե պարզապես գնահատական նշանակել, այլ մեծացնել սովորելու ցանկությունը և բարձրացնել առաջադիմությունը

- Հասկանալ, թե որն է ձեռքբերումների, ուսումնական և անձնական հաջողությունների այն մակարդակը, որին ուզում ենք առավելագույնս հասնել աշակերտները, սահմանենք ձեռքբերումների աստիճանասանդղակ՝ նպատակներ, ակնկալիքներ, չափորոշիչներ, որոնց պետք է հասնել աշակերտները:
- Սա պետք է ուսուցչի ուշադրության կենտրոնում լինի գնահատման և միավորների հաշվարկման ժամանակ:
- Սովորողի ուսումնական առաջադիմության և անհատական զարգացման մասին ձևավորված պատկերացումները պիտի կարողանան արտահայտել գնահատականներով և միավորներով, որոնք ճշգրիտ կիրառվեն նրանց ձեռքբերումների մասին: Այդ նպատակով պետք է ընտրվեն գնահատման համապատասխան մեթոդներ
- Բարձրակարգ գնահատման տարբեր եղանակներն ամփոփվեն մեկ ամբողջի մեջ, որը կընդգրկի ուսուցչի ակնկալիքների ողջ շղթան և հնարավորություն կտա նրան հիմնավոր եզրահանգումներ անելու հնարավորություն սովորողի առաջադիմության մասին
- Կանխատեսելու ու բացառելու հմտություն սեփական գնահատումների մեջ, խուսափելու կողմնակալ, խտրական վերաբերմունքից, քաջալերելու, խրախուսելու հնարավորություն, որպեսզի վերջիններս կարողանան վստահել իրենց ուժերին և պայքարել ուսման բարձր առաջադիմության և անձնական հաջողությունների համար:

Այն ուսուցիչները, որոնք չեն խուսափում արդյունավետ գնահատմանը հասնելու դժվարություններից, հասկանում են, որ իրենք կարիք ունեն նախապես պատրաստվելու գնահատմանը: Նրանք հասկանում են, թե ինչու է կենսականորեն անհրաժեշտ աշակերտներին ու նրանց ընտանիքներին իրենց սպասելիքները հստակ ներկայացնելը, և թե ինչու է կարևոր, որ իրենց իրականացրած գնահատումը հստակ ու ճշգրիտ արտացոլի սովորողներից իրենց ակնկալիքները:

Սովորողը որպես գնահատման հիմնական օգտագործող

Գնահատման գործընթացի հիմնական գործող անձը, անշուշտ, ուսուցիչն է, սակայն գնահատման արդյունքները կապվում են գլխավորապես սովորողների հետ, ուստի նրանց կարող ենք գնահատման գործընթացի ու արդյունքի հիմնական սպառողներ համարել: Սթիգլինսը նոր տեսակետ է առաջ քաշում, ըստ որի ուսումնառության ընթացքում սովորողների հաջողությունը կամ ձախողումն առավելագույնս պայմանավորող որոշումներն ընդունվում են հենց իրենց՝ սովորողների կողմից: Սովորողներն իրենք են որոշում՝ արժանի են արդյոք գիտելիքներն այն ջանքերին, որ պահանջվում են դրանք ձեռք բերելու համար: Իրենք են որոշում՝ արդյոք իրենց բավարար չափով ունա՞կ են համարում տվյալ դասը, նյութը, թեման սովորելու համար: Հետևաբար ինչ էլ, որ անելու լինենք, նախ պետք է օգնենք նրանց հավատալ, որ ուսումնառության մեջ հաջողության հասնելու համար հնարավորություն ունեն, և որ այդ հաջողությունն արժանի է գործադրվելիք

ջանքերին: Ճիշտ որոշումներ կայացնելու համար սովորողները կարիք ունեն մշտապես մատչելի նկարագրական տեղեկատվություն ստանալ իրենց առաջընթացի մասին իբրև ընթերցողներ, գրողներ, հիմնասխնդիր լուծողներ և այլն: Այսօրինակ գնահատման գործընթացում ուսուցչի գործընկերը դառնալու դեպքում սովորողները ապշեցուցիչ արագությամբ հասունանում են: Տարիների փորձը ցույց է տալիս, որ թեպետ ուսուցիչները վճռորոշ դեր ունեն սովորողների հաջողության մեջ, բայց չափահասները չեն կարող աշակերտներին ստիպել սովորել, եթե վերջիններս այս կամ այն պատճառով չեն ուզում դա անել: Սովորողներն իրենք են պատասխանատու իրենց ուսումնառության համար: Եթե աշակերտները սովորոել չեն ուզում կամ սովորելու ունակ չեն զգում իրենց, ուսումնառությունը չի կայանա: Ուստի ուսուցիչների համար հիմնական ուղղորդող հարցը պետք է լինի հետևյալը.

- ինչպե՞ս կարող ենք օգնել աշակերտներին, որ սովորեն
- ինչպե՞ս օգնենք նրանց հասկանալ, որ իրենք ընդունակ սովորողներ են:

Պատասխանը միանշանակ է. դասարանում գնահատման մեծագույն ներուժը գիտակցվում է այն ժամանակ, երբ ուսուցիչն այդ գործընթացը բաց ու մատչելի է դարձնում սովորողների համար և ընդունում նրանց իբրև լիիրավ գործընկեր:

Երբ ուսուցիչներն աշակերտներին ներգրավում են գնահատման գործընթացում՝ դրանով իսկ դասարանում բացահայտելով, թե ինչ է նշանակում հաջողության հասնել, նրանք գիտակցում են, որ աշակերտները գնահատման արդյունքներն օգտագործում են այնպիսի որոշումների կայացման համար, որոնք վերջին հաշվով պատասխանում են այն հարցին, թե արդյոք դպրոցն Ֆաշխատու՞մ է նրանց համար, թե՛ ոչ: Դասարանական գնահատման ժամանակ ուսուցիչները պարտավոր են սովորողների համար մատչելի ու հասկանալի դարձնել այն տեղեկությունները, որոնք նրանց անհրաժեշտ են ժամանակի ընթացքում աճելու ու զարգանալու համար:

Ձևավորող գնահատումը որպես գնահատման տեսակ

Եթե ամփոփիչ գնահատումը սովորաբար ենթադրվում է անցկացնել դասընթացի կամ ուսումնական ծրագրի ավարտին վկայագրման կամ հաշվետվության նպատակով աշակերտների դրսևորումները չափելու և դրանց շուրջ հաղորդակցվելու համար, ապա ձևավորող գնահատումը ընթացիկ է, այն հիմնականում բնորոշվում է որպես գնահատում, որի հստակ նպատակը սովորողների ուսումնառության բարելավելն է, և որն անցկացվում է դասընթացի ընթացքում / Torrance and Pryor, 1998/: Յետևաբար ձևավորող գնահատման գործընթացը կարող է մեծապես վերահսկվել ուսուցիչների կողմից, որոնք հետադարձ կապով, իրենց արձագանքներով սովորողներին ցույց կտան, թե որոշակի ժամանակահատվածում ինչպես են հասել իրենց ուսումնառության որոշակի նպատակներին: Սակայն, կարող է լինել նաև այնպիսի մոտեցում, ըստ որի ձևավորող գնահատումը պետք է հիմնականում ուղղված լինի սովորողի փորձառությանը և նրան անխուսափելիորեն հարկադրի մտածել, թե ինչ ձեռքբերումներ ունի և ինչպես է հասել դրանց:

Ազդեցիկության և որոշիչ լինելու առումով անխոս, գերիշխող դեր ունի է միավորային գնահատումը: Այն դասարաններում, որտեղ միավորային գնահատումն

այսուհետ չի կիրառվելու, հնարավորություն է ստեղծվում առավել մեծ տեղ հատկացնելու ուսուցանող գնահատմանը, ինչը ենթադրում է ժամանակակից մանկավարժության մեջ հայտնի ձևավորող գնահատման կիրառումը:

Մանկավարժական գրականության մեջ գոյություն ունեն գնահատման տարբեր մեթոդներ, ինչպիսիք են գնահատումը պատասխանների ընտրանքի միջոցով, շարադրանքի գնահատումը, դրսևորման և արդյունքի գնահատումը, անձնական հաղորդակցումը՝ որպես գնահատում, հուզական գնահատումը և այլն: Շատ կարևոր է, որ ուսուցիչներն իմանան յուրաքանչյուր մեթոդի ուժեղ և թույլ կողմերը և հասկանան, թե ինչպես պետք է գնահատման մեթոդները համապատասխանեցնեն նպատակների հետ: Օրինակ, եթե ուսուցիչն ուզում է գնահատել աշակերտի պատմելու կարողությունը, գնահատման լավագույն մեթոդն աշակերտին պարզապես որևէ բան պատմել տալն է: Այս կապակցությամբ տեղին է հիշել Եզոպոսից մեզ հասած մի հին պատմություն մի մարդու վերաբերյալ, որն օտար ավերում շրջելուց հետո տուն վերադառնալով՝ պատմում էր իր զարմանալի արկածների և մեծագույն սխրանքների մասին:Նրա սխրանքներից մեկը ցնցող ցատկն էր եղել Յոդոս քաղաքում: <<Ես այնքան հեռու էի ցատկել, պատմում էր նա, որ ուրիշ ոչ ոք չէր կարող այդպիսի ցատկ կատարել:Շատերն էին ականատես իմ այդ ցատկին, և եթե Յոդոս գնանք, նրանք ձեզ կասեն, որ այն, ինչ պատմում եմ, ճշմարիտ է>>: <<Վկայությունների կարիք չկա, ասում է նրան ունկնդիրներից մեկը, պատկերացրու, որ սա Յոդոս քաղաքն է, և հիմա ցույց տուր, թե դու որքան հեռու կարող ես ցատկել>> (Johnson and Johnson, 1996): Ի՞նչ կարելի է եզրակացնել այս պատմությունից. եթե կա գնահատման ուղղակի և հեշտ ձև, ուսուցիչները հենց այն պիտի ընտրեն:Պարզ է, որ յուրաքանչյուր դեպքի համար լավագույն մեթոդն ընտրել կարող են այն ուսուցիչները, ովքեր ծանոթ են բոլորին: Այս առումով գնահատման նոր ձևաչափի ներմուծումը ուսումնառության գործընթաց ինքնազարգացման նոր հորիզոններ է բացում թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի համար: Այսպիսով, ինչո՞վ է տարբերվում ավանդական ամփոփիչ գնահատումը ձևավորող գնահատումից:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է սովորողների գիտելիքների համապատասխանությունը կրթական չափորոշիչների նորմերին և պահանջներին հաստատելու նպատակով և պարզում է սովորողների ուսման որակը :

Եթե ձևավորող գնահատումն իրականացվում է հենց ուսումնական գործընթացի մասնակիցների կողմից և այն հաճախականությամբ, որն անհրաժեշտ է ուսուցչին և սովորողներին կրթական նպատակներին հասնելու համար, ապա ամփոփիչ գնահատումն իրականացվում է, որպես կանոն, արտաքին մարմինների կողմից՝ որոշակի նորմատիվ իրավական ակտերի, փաստաթղթեր համաձայն: Ձևավորող գնահատման ժամանակ գնահատման սանդղակը կարող է մշակվել ուսուցչի կամ ուսուցիչների խմբի կողմից, ամփոփիչ գնահատման ժամանակ օգտագործվում է ընդհանուր ընդունված պետական գնահատման սանդղակը:

Ըստ ռուս մանկավարժ և գիտնական Մ. Պինսկայայի ուսումնական ձեռքբերումներին միտված ձևավորող գնահատումը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

• **Սովորողակենտրոն է**

Այս գնահատումը ուսուցչի և աշակերտի ուշադրությունն ավելի շատ կենտրոնացնում է ուսուցման մոնիտորինգի և բարելավման վրա, այլ ոչ թե դասավանդելու: Այն տալիս է ուսուցչին և սովորողին ուսուցումը բարելավելու և զարգացնելու մասին տեղեկատվություն, որի վրա հիմնվում են իրենց հետագա որոշումները:

• **Ուսուցչի կողմից ուղղորդում ունի**

Այս գնահատումը ենթադրում է ուսուցչի ինքնավարություն, ակադեմիական ազատություն և բարձր պրոֆեսիոնալիզմ, քանի որ նա է որոշում, թե ի՞նչ գնահատել, ինչպե՞ս և ինչպե՞ս արձագանքել գնահատման արդյունքում ստացված տեղեկատվությանը: Այնուամենայնիվ, ուսուցչից չի պահանջվում գնահատման արդյունքները քննարկել իր դասարանից դուրս որևէ մեկի հետ:

• **Բազմակողմանիորեն արդյունավետ է**

Քանի որ գնահատումը կենտրոնացած է սովորելու վրա, այն պահանջում է սովորողների ակտիվ մասնակցություն: Գնահատմանը մասնակցելու միջոցով աշակերտներն ավելի են խորասուզվում նյութի մեջ և զարգացնում ինքնագնահատման հմտությունները: Բացի այդ, նրանց սովորելու մոտիվացիան մեծանում է, քանի որ երեխաները տեսնում են ուսուցիչներին, ովքեր հետաքրքրված են օգնելում, իրենց ուսման մեջ հաջողակ դառնալում:

Ուսուցիչները նաև աշխատում են ավելի մեծ կենտրոնացվածությամբ, քանի որ նրանք անընդհատ իրենց հարցնում են. «Որո՞նք են ամենակարևոր գիտելիքներն ու հմտությունները, որոնք ես փորձում եմ սովորեցնել իմ սովորողներին»: «Ինչպե՞ս կարող եմ պարզել՝ նրանք սովորել են դա»: Տեղեկություն կարող եմ օգնել նրանց ավելի լավ սովորել: Եթե ուսուցիչը, պատասխանելով այս հարցերին, սերտորեն համագործակցում է սովորողների հետ, նա բարելավում է իր դասավանդման հմտությունները և նորովի է ընկալում իր գործունեությունը:

• **Ձևավորում է ուսումնական գործընթացը**

Այս գնահատման նպատակը դասավանդման որակի բարձրացումն է և ոչ թե գնահատականները նշանակելը: Այն երբեք չի կատարվում միավորներով և հաճախ անանուն է:

• **Որոշվում է ըստ համատեքստի**

Այս գնահատումը պետք է հարմարեցվի ուսուցչի, սովորողի հատուկ բնութագրերին ու կարիքներին, Այն, ինչ լավ է աշխատում մի դասարանում, կարող է չաշխատել մյուսում:

Այս գնահատումը շարունակական գործընթաց է, որը գործարկում է հետադարձ կապի մեխանիզմը և այն մշտապես աշխատում է: Օգտագործելով պարզ

տեխնիկաների լայն տեսականի, որոնք կարելի է արագ և հեշտությամբ սովորել, ուսուցիչը ստանում է արձագանքներ աշակերտներից, թե ինչպես են նրանք սովորում: Ուսուցիչները կիրառում են այս մեխանիզմները՝ սովորողներին տրամադրելով գնահատման արդյունքների վերաբերյալ կարծիք և հնարավորություններ բարելավելու իրենց ուսման գործընթացը: Ստուգելու համար, թե որքանով են օգտակար այս առաջարկությունները, ուսուցիչները նորից գործարկում են հետադարձ կապի մեխանիզմը՝ նոր գնահատականներով: Եթե այս մոտեցումը ինտեգրվի դասարանում կատարվող ամենօրյա ուսումնական գործունեության մեջ, ուսուցչին և սովորողներին կապող հաղորդակցման մեխանիզմը և սովորեցնելով սովորելը դառնում է ավելի արդյունավետ:

• Արմատավորված որակյալ ուսուցման իրականացում է

Նման գնահատումը ձգտում է հիմնվել գոյություն ունեցող բավականին հաջող և բարձր մասնագիտական պրակտիկայի վրա՝ ներառելով հետադարձ կապի մեխանիզմ, որը տեղեկացնում է ուսուցչին, թե ինչպես են սովորում աշակերտները, և ավելի համակարգված, ճկուն և արդյունավետ պրակտիկ տեղեկատվություն տալիս: Ուսուցիչը ակտիվորեն հարցեր է տալիս սովորողներին, պատասխանում նրանց մոտ ծագած հարցերին, դիտում է նրանց վարքը, դեմքի արտահայտությունը, կարդում է տնային առաջադրանքները, ստուգում թեստերը և այլն: Ձևավորող գնահատումը հնարավորություն է տալիս բնականոն կերպով ինտեգրելու գնահատումը դասավանդման և ուսուցման ավանդական գործընթացներին:

Օտարերկրյա հետազոտողների տեսանկյունից դպրոցականների կրթական ձեռքբերումներին միտված ձևավորող գնահատման համար պետք է ստեղծվեն հետևյալ պայմանները.

- 1) գնահատման առաջադրանքները համապատասխանում են ուսումնասիրված նյութի բովանդակությանը.
- 2) օգտագործվում են սովորողներին ծանոթ և նրանց տարիքին համապատասխան առաջադրանքների ձևեր: Առաջադրանքների նպատակը յուրաքանչյուր սովորողի մոտ ուսուցման գործընթացում առաջացող խնդիրները բացահայտելն է: Կարևոր է, որ ուսուցիչը հասկանա մտքի այն ընթացքը, որը առաջադրանքը կատարելու գործընթացում աշակերտին տանում է հենց այս արդյունքին:
- 3) գնահատման արդյունքներն անմիջապես հասանելի են ուսուցչին և սովորողին: Ուսուցիչը և սովորողը հնարավորություն կունենան գնահատման արդյունքների հիման վրա պլանավորել գիտելիքների որակի բարձրացմանն ուղղված որոշակի գործողություններ.
- 4) ձևավորման գնահատման գործընթացը շարունակական է. Այն իրականացվում է ոչ միայն արդյունքների հիման վրա, այլև որոշակի թեմայի (բաժնի) ուսումնասիրման գործընթացում.

5) սովորողի ձեռքբերումները դիտարկվում են դինամիկայի մեջ, այսինքն. Այս գնահատման արդյունքները համեմատվում են սովորողի նախորդ արդյունքների հետ:

Կան ձևավորող գնահատման մի քանի ռազմավարություններ: Անգլիացի գիտնականներ Դ. Ուիլիամը և Պ. Բլեքն առաջարկում են հետևյալ ռազմավարությունը.

- 1) որոշել սովորողների մտադրությունները և հաջողության չափանիշները.
- 2) ստեղծել պայմաններ հետադարձ կապի համար, որոնք կապահովեն սովորողների առաջընթացը.
- 3) ակտիվացնել սովորողների աշխատանքը խմբերով և զույգերով՝ փոխադարձ գնահատում իրականացնելու համար.

4) բացատրել սովորողներին, որ իրենք են իրենց ուսուցման կազմակերպիչները:

Ռուս գիտնականներ Ի.Ս. Ֆիշմենը և Գ.Բ. Գոլուբն առաջարկում է հետևյալ աշխատանքային պլանը.

- 1) նպատակները դարձնել չափելի վերջնարդյունքներ
- 2) կազմակերպել սովորողների գործունեությունը նախատեսված արդյունքի հասնելու համար.
- 3) ստեղծել հետադարձ կապ՝ վերահսկելու սովորողների կողմից իրենց կրթական նպատակներին հասնելու գործընթացը:

Ըստ Մ.Ա. Պինսկայայի, աշխատանքային ռազմավարությունն ունի հետևյալ տեսքը.

- 1) նպատակները վերածվում են չափելի կրթական արդյունքների.
- 2) որոշվում է դրանց հասնելու անհրաժեշտ մակարդակը.
- 3) ընտրված են գնահատման տեխնիկան.
- 4) իրականացվում են համապատասխան ուսուցման մեթոդներ.
- 5) անցկացվում է գնահատում և պարզվում է՝ սովորողները հասել են պլանավորված արդյունքներին:

Ի՞նչ է ձևավորող գնահատումը

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է: Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում, այլ ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ: Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում: Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:

Ձևավորող գնահատման նպատակն է

- բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Ձևավորող գնահատման խնդիրն է

- ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը
- սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը
- սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը

Ձևավորող գնահատման ձևերն են

- բանավոր հարցում
- գրավոր աշխատանք
- գործնական (լաբորատոր) աշխատանք
- տնային աշխատանք.
- նախագծային աշխատանք
- քննարկում, բանավեճ
- այլ

Ձևավորող գնահատումն ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները: Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ: Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ձևավորող գնահատումը սովորողների համար հետադարձ կապ է, որը թույլ է տալիս նրանց որոշարկելու, թե ինչ քայլեր պետք է իրենք ձեռնարկեն իրենց արդյունքները բարելավելու համար: Ձևավորող գնահատման նպատակն է նպաստել յուրաքանչյուր աշակերտի անհատական որակների զարգացմանը: Գնահատման այս եղանակը բավական բազմաֆունկցիոնալ է և համարվում է մի շարք դրական բաղադրիչների խթան:

Այն է՝

- Նպաստում է արդյունավետ ուսուցմանը
- արդյունավետ ծրագրման բաղադրիչ է
- ուշադրության կենտրոնում է պահում այն, թե ինչպես են աշակերտները ձեռք բերում գիտելիք,
- մանկավարժի հիմնական մասնագիտական հնարներից մեկն է,
- ապահովում է մոտիվացիան, նպաստում է նպատակների և չափանիշների հստակեցման,
- օգնում է աշակերտներին՝ հասկանալու, թե ինչպես բարելավեն իրենց արդյունքները,
- զարգացնում է ինքնագնահատման և փոխգնահատման կարողությունները,
- խթանում է ինքնուրույն ուսումնառությունը:

Ձևավորող գնահատումը ուսուցչին թույլ է տալիս՝

- հասկանալու, թե ինչ գիտեն և ինչ չգիտեն աշակերտները
- հասկանալու, թե ինչ են կարողանում և ինչ չեն կարողանում սովորողները
- ձևակերպելու ուսուցման նպատակ յուրաքանչյուր սովորողին կոնկրետ առաջադրանք հանձնարարելիս,
- ձևավորելու պատկերացում յուրաքանչյուր երեխայի և ընդհանուր դասարանի յուրահատկությունների մասին և կազմակերպելու սեփական աշխատանքը՝ հիմնվելով դրա վրա:

Ձևավորող գնահատման հնարների և ռազմավարությունների օրինակներ

Ուսումնական գործընթացում ձևավորող գնահատում իրականացնելիս վերլուծվում են սովորողների գիտելիքները, հմտությունները, արժեքային համակարգն ու վերբերմունքը, հաստատվում է ուսուցիչ-աշակերտ հետադարձ կապը:

Մանկավարժները, ելնադրելով, որ սովորողները յուրացրել են այն, ինչ սովորեցնել իրենց, կազմակերպելով ստուգողական և թեստային աշխատանքներ, հաճախ հիասթափվում են, երբ պարզում են, որ դա ամենևին էլ այդպես չէ: Ցավոք, երեխաները չեն սովորում այն ծավալով, որքան ուսուցիչներն են նրանցից սպասում: Գոյություն ունի հսկայական անջրպետ ուսուցանվածի և սովորողների սովորածի միջև: Երբ ուսուցիչները դա նկատում են, արդեն ուշ է լինում խնդիրը լուծելու համար: Հետևաբար, ձևավորող գնահատումը անհրաժեշտ է, որպեսզի ախտորոշվի, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը սկզբնական և միջանկյալ, և ոչ թե միայն վերջնական փուլում: Եթե ստացված տվյալների հիման վրա պարզվում է, որ արդյունքները անբավարար են, ապա անհրաժեշտություն է առաջնում փոփոխել, բարելավել կրթական գործունեության (դասավանդման) որակը : Այս առումով ձևավորող գնահատումը գնահատման այն տեսակն է, որը միտված է ուսման որակի բարելավմանը:

Ձևավորող գնահատման հնարները ոչ միայն կարողանում են բավարարել միավորային գնահատումից ակնկալվող գործառույթների զգալի մասը, այլև թույլ են տալիս զարգացնելու այնպիսի որակներ, որոնք ինքնին նպաստում են աշակերտի գիտակցության մեջ կրթության և ինքնակրթության կարևորության ձևավորմանն ու ամրապնդմանը: Ինչպես նշել է աշխարհում ձևավորող գնահատման հիմնադիրներից Դիլըն Ուիլյամը (մեջբերելով կրթության մասնագետ Դևիդ Աուսուբեյին), Տնօրրելու վրա ազդող ամենակարևոր գործոնն այն է, ինչ սովորողն արդեն գիտի:

Ձևավորող գնահատումն օգնում է յուրաքանչյուր ուսուցչին պատկերացում կազմել այն մասին, թե որքան շատ և որքան լավ են սովորում իրենց աշակերտները: Ուսուցիչները կարող են օգտագործել հետադարձ կապի ընթացքում իրենց ստացած արձագանքները՝ վերակողմորոշել ուսուցումը, որպեսզի երեխաները սովորեն ավելի ակտիվ և արդյունավետ:

- Յուրաքանչյուր կատարված հանձնարարության մեջ ուսուցիչը առանձնացնում է 2,3 կամ 4 բան, որը տվյալ աշակերտը լավ է կարողանում անել: Ընդ որում, կարևոր է, որ այդ Տլավ՝ բնորոշումը տրվի ոչ թե ի համեմատ մյուս աշակերտների, այլ ի համեմատ տվյալ աշակերտի մինչև այդ գործադրած ջանքերի և գրանցած արդյունքների:
- Կատարված հանձնարարություններն ու դրանցում արված սխալները դիտարկելուց հետո ուսուցիչը գրում է այն բոլոր կանոնները (կախված առարկայի բնույթից), որոնք ուսումնասիրելով՝ սովորողը կկարողանա ևս մեկ անգամ անդրադառնալ իր աշխատանքին և ինքնաստուգում իրականացնել՝ փորձելով հայտնաբերել, թե որ կանոններն են վերաբերում իր աշխատանքում կատարած սխալներին:
- Եվս մեկ արդյունավետ հնար է փոխադարձ գնահատումը: Գրավոր աշխատանքի ավարտից հետո աշակերտներին բաժանվում են միմյանց աշխատանքները: Յուրաքանչյուր աշակերտ ստուգում է դասընկերոջ աշխատանքը, փնտրում ու վերհանում է սխալները: Ուսուցանող գնահատման այս միջոցի հիմնական նպատակն ոչ թե այն է, որ աշակերտը կարողանա գնահատել դասընկերոջը, այլ այն, որ ստուգման ընթացքում և կարողանա սովորել նյութը:

Ձևավորող (ոչ ֆորմալ) գնահատման ռազմավարություններ

Սրանք նաև ներգրավված ռազմավարություններ են

	Ռազմավարություն	Նկարագրություն
1	Արագ գրել	Աշակերտը 2-3 րոպեում գրում է այն մասին, թե ինչ է լսել դասախոսությունից կամ բացատրություն/ կարդացել/սովորել: Կարող է լինել ուսուցչի կողմից տրված բաց հարցի պատասխան
2	12 բառով	12 բառով կամ ավելի քիչ, թող աշակերտները ամփոփեն ուսուցման

	ամփոփում	կամ ընթերցանության որոշակի հատվածի կարևոր կողմերը/զարգացում է լակոնիկ խոսքը
3	3-2-1	Աշակերտները նշում են ներկայացված <ul style="list-style-type: none"> • 3 գաղափարներ, հասկացություններ կամ բարձրաձայնած խնդիրներ: • 2 աշակերտները նշում են գաղափարի կամ հասկացության օգտագործման երկու օրինակ • 1 գրում են մեկ չլուծված հարց կամ հնարավոր շփոթմունք
4	Ամենացեխոտ կետը	Աշակերտներին առաջարկվում է գրի առնել դասի ամենացեխոտ/անհասկանալի կետը/հատվածը (մինչև այդ կետը անհասկանալի էր)
5	Դասի արագ ստուգում	Աշակերտներին տվեք թղթե փսեսներ, քարտեր, գրատախտակ կամ մեծ թղթեր, երբ նրանք ներս մտնեն: Երբ հարց եք տալիս, թող ԲՈԼՈՐ սաները գրեն պատասխանը և ձեր ազդանշանի ժամանակ թող ԲՈԼՈՐը բարձրացնեն փսեսն (կամ որևէ այլ բան), որպեսզի կարողանաք տեսնել: ով / քանիսն է ստացել պատասխանը: Սրան կարող է հաջորդել քննարկումը:
6	Դասարանական քվեարկություն	Ներկայացրեք հարցի կամ խնդրի մի քանի հնարավոր պատասխաններ կամ լուծումներ և թող աշակերտներին քվեարկեն իրենց կարծիքով լավագույնը:
7	Գաղափարի ալիք	Յուրաքանչյուր աշակերտ գրում է 3-5 գաղափար հանձնարարված թեմայի վերաբերյալ: Մեկ կամավոր սկսում է «գաղափարի ալիքը»՝ կիսվելով իր գաղափարով: Կամավորից աջ կողմում գտնվող աշակերտը կիսում է մեկ գաղափար. իրավասու հաջորդ աշակերտը կիսում է մեկ գաղափար. Ուսուցիչը ուղղորդում է գաղափարի ալիքը քանի դեռ մի քանի տարբեր գաղափարներ չեն կիսվել: Պաշտոնական գաղափարների ալիքի վերջում մի քանի կամավորներ, ովքեր ներառված չեն եղել, կարող են իրենց ներդրումն ունենալ:
8	Մուտքի և ելքի տոմսեր	Ուսուցիչը աշակերտներին տալիս է կոնկրետ հարց դասի վերաբերյալ: Այնուհետև աշակերտները պատասխանում են տոմսի վրա և տալիս են ուսուցչին կամ դուրս գալու կամ հաջորդ օրը ներս գալու ճանապարհին: Այնուհետև ուսուցիչը կարող է գնահատել նորից դասավանդելու անհրաժեշտությունը կամ պատասխաններ պահանջող հարցերը:
9	Չորս անկյուն	Ուսուցիչը տեղադրում է հարցեր, հասկացություններ կամ բառապաշարի բառեր յուրաքանչյուր անկյունում սենյակը. Յուրաքանչյուր աշակերտի նշանակվում անկյուն: Անկյունում հայտնվելուց հետո աշակերտները սկսում են քննարկել անկյունում

		<p>դրված հարցը:</p> <p>Աշակերտները կարող են գեկուցել իրենց անկյունի աշխատանքը անհատապես ուսուցչին և տեղափոխվել մեկ այլ անկյուն և կրկնել: Այն բանից հետո, երբ աշակերտները տեղափոխվել են բոլոր անկյուններով, որպես գրավոր առաջադրանք, նրանք պետք է գրեն, թե ինչպես այս աշխատանքը փոխեց իրենց կարծիքը կամ մտածողությունը:</p>
10	Տվեք մեկը, ստացեք մեկ ուրիշը	<p>Աշակերտներին տրվում են թղթեր և խնդրում են թվարկել ուսուցման վերաբերյալ 3-5 գաղափար: Աշակերտի վերջին գաղափարից հետո գիծ քաշեք՝ նրա գաղափարները դասընկերների ցուցակներից առանձնացնելու համար:</p> <p>Աշակերտները վեր են կենում և շփվում են մեկ դասընկերոջ հետ: Փոխանակեք թղթեր, կարդացեք ձեր գործընկերների ցուցակը և այնուհետև հարցեր տվեք նոր կամ շփոթեցնող գաղափարների մասին:</p>
11	Հասկացողությունների քարտեզագրում	<p>Բացատրել/ մոդելավորել հասկացողությունների քարտեզը: Դասախոսությունից, բացատրությունից կամ ընթերցումից հետո սաներին հանձնարարեք լրացնել հասկացողությունների քարտեզը (գույգերով կամ անհատապես), հետո ներկայացնել այն գեկույցի տեսքով:</p>
12	Ֆլեշ քարտեր	<p>Դասախոսությունից կամ գաղափարի ներկայացումից 10 րոպե անց սաներին հանձնարարեք ստեղծել ֆլեշ քարտ, որը պարունակում է հիմնական գաղափարը կամ գաղափարները: Դասի ավարտին հանձնարարեք սաներին գույգերով աշխատել՝ մտքեր փոխանակելու և կյուլթը վերանայելու համար:</p>
13	Ուսուցման բջիջ	<p>Աշակերտները ինքնուրույն են մշակում հարցեր և պատասխաններ: Չույգերով աշխատելով՝ առաջին աշակերտը հարց է տալիս, իսկ գործընկերը պատասխանում է և հակառակը: Յուրաքանչյուր աշակերտ կարող է ուղղել մյուսին, քանի դեռ բավարար պատասխան չի տրվել հասել է. (Լավ միջոց է խրախուսելու սաներին վերադառնալ դասագրքին):</p>
14	Մեկ րոպեանոց թուղթ	<p>Ուսուցիչը որոշում է, թե ինչ պետք է գրված լինի թղթի վրա: Հարցրեք սաներին «Ո՞րն էր ամենակարևորը, որ սովորեցիք: Ո՞ր կարևոր հարցն է մնում անպատասխան: Հաջորդ դասին 5-10 րոպե հատկացրեք արդյունքները քննարկելու համար: Կարող է օգտագործվել նաև դասի կեսին:</p>
15	Ազդանշանային քարտեր/բուլթ մատները վեր-ներքև	<p>Ստեղծեք քարտեր՝ հասկանալու համար: կանաչը նշանակում է «ես ստացել եմ», դեղինը նշանակում է «վստահ չեմ, գուցե», իսկ կապույտը նշանակում է «ես կորել եմ» հարցեր ունեմ»</p>

16	Փոխանցել և կիրառել	Աշակերտները թվարկում են, թե ինչ են սովորել և ինչպես կարող են դա կիրառել իրենց իրական կյանքում: Աշակերտները թվարկում են հետաքրքիր գաղափարներ, ռազմավարություններ, հասկացություններ, որոնք սովորել են դասարանում կամ դասի մի մասում: Այնուհետև նրանք գրում են այս ուսումը իրենց կյանքում կիրառելու հնարավոր եղանակներ, մեկ այլ դասարանին կամ իրենց համայնքին ներկայացնելու համար:
17	Շրջանաձև ստուգում	Խմբերում աշակերտներին տրվում է որոշակի պատասխանով խնդիր (լավ է մաթեմատիկայի և գիտության համար): Առաջին աշակերտը կատարում են առաջին քայլը առանց խմբում ուրիշների ներդրման և այն փոխանցում հաջորդ աշակերտին: Երկրորդ աշակերտը ուղղում է ցանկացած սխալ և ավարտում հաջորդ քայլը՝ կրկին առանց խմբի մուտքի: Խնդիրը փոխանցվում է հաջորդ աշակերտին և գործընթացը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև խումբը ստանա ճիշտ պատասխանը:

Այս տեսակի գնահատման հիմնական նպատակն է մոտիվացնել սովորողին պլանավորել նպատակներ և կրթական արդյունքների հասնելու ուղիներ՝ հետագա ուսուցման և զարգացման համար: Ըստ արտասահմանցի հետազոտողներ Պ. Բլեքի և Դ. Ուիլյամի, ձևավորող գնահատման հիմնական առանձնահատկությունն այն հնարների և մեթոդների կիրառումն է, որոնք բարելավում են սովորողների գիտելիքների որակը: Գնահատման այս տեսակը ուսուցչի և աշակերտի համար հետադարձ կապի գործիք է, որը թույլ է տալիս գնահատել ուսուցման ներկա վիճակը և որոշել աշակերտի հետագա զարգացման հեռանկարները: Ձևավորող գնահատումն այդպիսին կլինի միայն այն դեպքում, եթե դրա արդյունքներն անմիջապես օգտագործվեն ուսուցման նոր ուղիներ և ձևեր որոշելու համար: Ձևավորող գնահատում իրականացնելիս կարևոր չէ, թե ինչ ձևեր, հնարներ և մեթոդներ են օգտագործվում: Այն բնութագրվում է ոչ թե կոնկրետ առաջադրանքների օգտագործմամբ, այլ գնահատման այդ տեսակի իրականացման նպատակն է երեխայի անձնական առաջընթացն ուսման մեջ:

Ձևավորող գնահատման գործընթացը

Ձևավորող գնահատման մանկավարժական տեխնոլոգիան ենթադրում է ուսումնական գործընթացի կազմակերպման մեջ ուսուցչի և սովորողների փոխգործակցության որոշակի ալգորիթմ և բաղկացած է ինը քայլից:

Քայլ 1. Սովորողների կրթական արդյունքների պլանավորում ըստ թեմայի.

Այս տեխնոլոգիայի առանձնահատկությունը ենթադրում է նախնական քայլ ուսուցչի աշխատանքային ծրագրի մշակման փուլում, ոչ թե դասի անցկացման ընթացքում: Ուսուցչի աշխատանքային ծրագրում աշակերտների կրթական

արդյունքները (առարկայական, վերառարկայական, անձնական) պետք է պլանավորվեն և բաշխվեն ըստ ուսումնական թեմաների:

Քայլ 2. Դասի նպատակի պլանավորում՝ որպես սովորողների գործունեության ուսումնական արդյունք:

Որպեսզի ուսումնական նպատակը ախտորոշելի լինի, այն պետք է ձևակերպվի ոչ թե ուսուցչի, այլ աշակերտի գործունեության տեսանկյունից:

Քայլ 3. Դասի խնդիրների ձևավորում՝ որպես ուսանողի գործունեության փուլեր:

Այնուհետև դասի նպատակները պետք է վերածվեն դասի խնդիրների, որոնք արտացոլում են դասի ժամանակ սովորողների կոնկրետ գործողությունները: Դասի բոլոր խնդիրների լուծումը պետք է հանգեցնի նպատակին հասնելու:

Քայլ 4. Դասին աշակերտի գործունեությունը գնահատելու կոնկրետ չափանիշների ձևավորում:

Չափանիշները կարող է ստեղծել ուսուցիչը՝ աշակերտների հետ միասին: Սովորողը պետք է նախապես իմանա առաջադրանքը գնահատելու չափանիշները:

Գնահատման չափանիշներ ընտրելիս պետք է հիշել, որ դրանք պետք է ունենան հետևյալ բնութագրիչները:

1) լինել միանշանակ, այսինքն. գնահատման արդյունքը չպետք է կախված լինի գնահատողի և գնահատվողի անհատից:

2) հասկանալի լինել ոչ միայն ուսուցչի, այլև սովորողների համար, որպեսզի նրանք կարողանան իրականացնել աշխատանքի ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

3) լինել կոնկրետ՝ առանց այնպիսի վերացական ձևակերպումների, ինչպիսիք են, օրինակ, «լավ է հասկանում» կամ «հաջողությամբ յուրացրել է»: Նրանք պետք է հնարավորություն տան միանշանակ գնահատել սովորողի գործունեության արդյունքը:

Քայլ 5. Աշակերտների գործունեության գնահատում չափանիշների հիման վրա:

Չափանիշների ձևակերպումից հետո անհրաժեշտ է գնահատել սովորողների գործունեությունը այդ չափանիշներին խստորեն համապատասխան:

Քայլ 6. Տրամադրել հետադարձ կապ՝ ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ:

Հետադարձ կապի կազմակերպման կարևոր պայմանը դրա հակադարձ մեխանիզմն է՝ աշակերտը պետք է պատասխան ստանա ուսուցչից: Սա կապահովի սովորողներին մանկավարժական աջակցության և աշակցության մեխանիզմի

ներդրումը: Այս մեխանիզմի նպատակն է հասկանալ սովորողների սխալները և առաջարկություններ մշակել դրանց կանխարգելման համար:

1. Ուսուցիչից աշակերտին հետադարձ կապն իրականացվում է հետևյալ իրավիճակներում.

- դասի առանձին փուլերում սովորողների գնահատման ժամանակ. Դրա նպատակն է սովորողներին մատնանշել սխալները և դրանք ուղղելու ճանապարհները: Այն իրականացվում է բանավոր/գրավոր մեկնաբանությունների տեսքով՝ օգտագործելով պայմանական նշանների համակարգ.

- թեմայի ուսումնասիրության արդյունքների հիման վրա (գլուխներ, բաժիններ և այլն): Ուսուցիչը վերլուծում է աշակերտների սխալները և խորհուրդներ տալիս, թե ինչպես խուսափել դրանցից:

2. Աշակերտից աշակերտ հետադարձ կապն իրականացվում է դասի առանձին փուլերում աշխատանքի փոխադարձ գնահատման ժամանակ:

3. Աշակերտից ուսուցչին հետադարձ կապն իրականացվում է դասի առանձին փուլերում գնահատման ժամանակ: Այս հետադարձ կապի նպատակն է բացահայտել աշակերտների խնդիրները և նյութի յուրացումը, ինչպես նաև օպտիմալացնել դասավանդման մեթոդներն ու հնարները և խթանել ուսուցչի մանկավարժական ինքնանդրադարձը, որն իրականացվում է ինքնագնահատման թերթիկների, հասկացությունների քարտեզագրման, ռեֆլեքսիայի (գրավոր/ բանավոր) միջոցով և այլն: Հետադարձ կապը պետք է ավարտվի ուսանողների հետ ուսուցչի փոխազդեցությամբ, որի ընթացքում տեղեկատվություն է փոխանակվում աշակերտի ուսուցման գործընթացում ծագած դժվարությունների մասին:

Քայլ 7. Որոշեք յուրաքանչյուր ուսանողի անձնական « կրթական առաջընթացը:

Գնահատելիս անհրաժեշտ է համեմատել սովորողների կրթական արդյունքները նրանց նախորդ նվաճումների մակարդակի հետ: Այսինքն ուսուցիչը աշակերտի ձեռքբերումների մակարդակը համեմատում է ոչ թե նորմերի, չափանիշների, այլ նրա ձեռքբերումների նախորդ մակարդակի հետ: Այս մոտեցումը պետք է արտացոլվի աշակերտի գնահատականում:

Քայլ 8. Աշակերտի տեղը որոշել նպատակին հասնելու ճանապարհին:

Սովորողի անձնական «կրթական առաջընթացը» որոշելով՝ անհրաժեշտ է վերլուծել տվյալ ժամանակահատվածում նպատակին հասնելու հնարավորությունները՝ հաշվի առնելով տվյալ փուլում սովորողի ձեռք բերած արդյունքները:

Քայլ 9. Սովորողի կրթական ուղու փոփոխում.

Ձևավորող գնահատման արդյունքների հիման վրա սովորողների ուսումնական ուղիները կարող են փոփոխվել առաջադրանքների փոփոխականության պատճառով (օրինակ՝ տարբեր դժվարության մակարդակների թեստեր).

առաջադրանքների կատարման տարբեր տեմպեր (սովորողներին նախապես ծանոթացնելով նվազագույնին, որը նրանք պետք է կատարեն), արտադասարանական գործունեության ոլորտների ընտրություն և այլն:

Արդյունավետ հետադարձ կապի ապահովման հիմնական տեխնիկաներ.

- **Մինի (մեկ րոպեանոց) վերանայում:** Դասի վերջին մի քանի րոպեների ընթացքում խնդրեք սովորողներին կես թղթի վրա պատասխանել հետևյալ հարցերին՝ ՏՆՐՆ Էր այսօրվա սովորած դասի ամենակարևոր բանը! և ՏՆՐՆ կետն Էր ամենաքիչը պարզ!։ Նպատակն է ստանալ տվյալներ այն մասին, թե ինչպես են սովորողները հասկացել մատուցված դասանյութը:
- **Նշումների շղթա:** Աշակերտները միմյանց փոխանցում են ծրար, որի վրա ուսուցիչը գրել է մեկ հարց, թե ինչ է կատարվում դասին: Ստանալով ծրարը՝ սովորողը մի պահ գրում է պատասխանը և դնում ծրարի մեջ:
- **Հիշողության մատրիցա:**Սովորողները լրացնում են գծապատկերի բաժինները, որն ունի երկու առանցքներ՝ որոշակի ձևով նշանակված ուսուցչի կողմից: Օրինակ, երաժշտության դասընթացի համար սա կլինի ոճի (բարոկկո, կլասիցիզմ) և երկրի (Գերմանիա, Ֆրանսիա և այլն) անվանումը: Եվ սովորողները տեղադրում են տարբեր կոմպոզիտորների անունները ճիշտ վանդակում՝ ցույց տալով հիմնական հասկացությունները հիշելու և դասակարգելու իրենց կարողությունը:
- **Ուղղորդված արտածում:** Սովորողները գրում են ինչ-որ բանի թարգմանություն և ոչ մասնագետի տեսանկյունից (տրամադրում են անդրադարձ), որը նրանք հենց նոր ուսումնասիրել են՝ գնահատելու հասկացությունները հասկանալու և փոխանցելու իրենց կարողությունը: Ստացված տվյալները հնարավորություն են տալիս դասակարգել պատասխաններն ըստ այն բնութագրերի, որոնք ամենակարևորն են թվում և վերլուծել պատասխանները ինչպես նույն կատեգորիայի, այնպես էլ տարբեր կատեգորիաների մեջ՝ այդպիսով բացահայտելով նրանց առկա խնդիրները:
- **Ամփոփում մեկ նախադասությամբ:**Սովորողները պարզ նախադասությունների տեսքով ամփոփում են ուսումնասիրված թեման՝ պատասխանելով ՏՆՐՆ ինչ արեց, ո՞ւմ, Ե՞րբ, ինչպե՞ս, ինչո՞ւ՝ հարցերին: Խնդիրը՝ յուրաքանչյուր կետի համար միայն հստակ բնութագրեր ընտրելն է:
- **Սովորողի կողմից կազմված գրավոր թեստային հարցեր.** թույլ տվեք սովորողներին գրել թեստի հարցերն ու հնարավոր պատասխանները՝ թեմայի վերաբերյալ քննությանը համապատասխան ձևաչափով: Սա թույլ կտա նրանց գնահատել լուսաբանված թեման, խորհել, թե ի՞նչ են հասկացել և ի՞նչ հարցեր են հարմար թեստի համար:

Բոլոր պատասխանները վերանայելուց հետո հարկավոր է որոշել պատասխանների դասակարգման լավագույն չափանիշները, որպեսզի ընդգծենք պատասխանների որոշակի օրինաչափություններ: Սովորողների հետ այս օրինաչափությունների քննարկումը կարող է բարելավել դասավանդումն ու ուսուցումը:

Օգտագործելով ստացված տվյալները՝ հարկավոր է արագ և ամբողջությամբ գնահատել յուրաքանչյուր ամփոփագրի որակը: Ուշադրություն դարձնել՝ արդյոք

սովորողները բացահայտում են ընդգրկված նյութի հիմնական հասկացությունները և դրանց փոխհարաբերությունները: Սովորողների հետ կիսվել դիտարկումներով:

Ի՞նչ անել ստացված տվյալների հետ: Գնահատել հարցերի որակը, հիմք ընդունել ամենահետաքրքիրները և քննարկում կազմակերպել դասարանում: Կարող ենք նաև օգտագործել քննական հարցերը դրանք նախապես մշակելուց հետո:

Թորանսը և Փրայորը /1998/ կարծիք են հայտնում, որ ձևավորող գնահատումը Ֆանխոուսափելի մի բան՝ Է, այսինքն գնահատման բոլոր գործողությունները մեծ ազդեցություն կունենան աշակերտների ուսումնառության վրա, սակայն ձևավորող գնահատումն ամենօրյա դասարանական գնահատում չէ, քանի որ ձևավորող գնահատումը միտում ունի ուսումնառության վրա յուրահատուկ դրական ազդեցություն ունենալ, մինչդեռ ամենօրյա դասարանական գնահատումը նույնպես կարող է և՛ ազդել վարքի փոփոխության վրա, և՛ նպաստել ավելի լավ ընկալմանը: Սակայն այս տարբերակումը շատ դժվար է գործնականում կիրառել, ուստի կարող ենք նկատել, որ ամենօրյա դասարանական գնահատումը երբեմն ձևավորող գնահատման դեր է խաղում՝ հանդես գալով որպես ուսուցման նոր տեսակների, հին նյութի նկատմամբ նոր մոտեցումների ձևավորման գործիք, որն ամեն անգամ հիմնվում է սովորողների հետ հետադարձ կապի վրա: Ձևավորող գնահատման գործընթացում սովորողի ակտիվ ներգրավումը չափազանց կարևոր է, այլապես ուսուցիչները կարող են իրենց աշխատանքը կազմակերպել առանց գնահատման այս ձևի: Ձևավորող գնահատման իմաստը սովորողներին ուսուցման և ուսումնառության գործընթացում ներգրավելն է:

Ստորև ներկայացնում են ձևավորող գնահատման գործընթացի Թորանսի և Փրայորի /1998/ առաջարկած սմուշը, որի մեջ նշված են ուսուցչի հնարավոր նպատակները և սովորողի կողմից ձեռքբերվող հնարավոր արդյունքները:

Ձևավորող Ու- ուսուցիչ, Ա- աշակերտ		գնահատման	գործընթացը
	Նկարագրություն	Ուսուցչի նպատակներ	Աշակերտի արդյունքներ
1.	Ու-ն հետևում է Ա-ին աշխատանքի ընթացքում (գործընթաց):	Հասկանալ, թե ինչու/ինչպես է կատարում Ա-ն առաջադրանքը:	Շնորհիվ Ու-ի ուշադրության մեծանում է շահագրգռությունը
2.	Ու-ն ստուգում է կատարված աշխատանքը (արդյունք):	Հասկանալ, թե Ա-ն ինչ է արել:	Շնորհիվ Ու-ի ուշադրության մեծանում է շահագրգռությունը

3.	Ու-ն սկզբունքային հարց է տալիս (փորձում է պարզել, թե ինչ գիտի Ա-ն, ինչպես է հասկանում և ինչ կարող է անել) Ա-ն պատասխանում է:	Ծանոթանալ Ա-ի գիտելիքներին:	Կրկնում է գիտելիքը, հասկանում, հասկանում հմտությունները, վերարտադրում հասկացածը այն գիտակցելու նպատակով:
4.	Ու-ն խնդրում է պարզաբանել, թե ինչ է արվել, ինչ է արվում կամ պիտի արվի: Ա-ն պատասխանում է	Հասկանալ, թե ինչու/ինչպես է կատարում Ա-ն առաջադրանքը: Խթաներ ավելի խորը ըմբռնում:	Կրկին վերարտադրում է հասկացածը, այն ավելացնում է ինքնավերլուծությունը և ամփոփելու, կշռադատելու, կանխագուշակելու և ենթադրելու հմտությունները:
5.	Ու-ն հարցնում է Ա-ին, թե ինչպես և ինչու է ընտրվել որոշակի գործողություն (մետագործընթաց և մետախմացական հարցում): Ա-ն պատասխանում է:	Հայտնել նպատակները և հաջողության չափանիշը. գործուն աշխատանք ապահովել, համապատասխանեցնել/հարմարեցնել աշխատանքի արագությունը:	Կարող է խոսել իր մտածողության ընթացքի մասին, վերջինս դարձնելով իր մտորման առարկան
6.	Ու-ն հայտնում է առաջադրանքի չափանիշների մասին (ինչ պետք է արվի առաջադրանքը կատարելու համար) կամ քննարկում է դրանք Ա-ի հետ:		Հասկանում է առաջադրանքը և նրա հիմքում ընկած սկզբունքները:
7.	Ու-ն հայտնում է որակի չափանիշները կամ դրանք քննարկում Ա-ի հետ:	Բարձրացնել ապագա աշխատանքի որակը, խթանել անկախության մեծացումը	Ըմբռնում է որակի հասկացությունը, ինչը նպաստում է հետագա ինքնակառավարմանը
8.	Ու-ն քննադատում է աշխատանքի որևէ կողմ կամ խնդրում Ա-ին այդ անել:	Բարձրացնել ապագա աշխատանքի որակը, խթանել անկախության աճը:	Վերարտադրում և հարցեր է տալիս որակի չափանիշի մասին.ավելի լավ է հասկանում որակին առնչվող խնդիրները. զարգացնում է ինքնակառավարման հմտությունները:
9.	Ու-ն տեղեկություններ է հաղորդում, ուղղում կամ հակընդեմ առաջարկ	Հաղորդակցվել այլընտրանքային կամ ավելի ընդունելի արդյունքի շուրջ:	Գիտելիքի կամ ըմբռնման աճ

	անում:		
10.	Ու-ն կատարված աշխատանքի վերաբերյալ արժևորող վերաբերմունք է դրսևորում կամ քննարկում այն առաջադրանքի և/կամ ջանքերի և/կամ ունակության, կարողության առումով (հավանաբար ապագա կամ անցյալ առաջադիմության հետ կապված):	Ազդել Ա-ի նկրտումների վրա և այդպիսով Ա-ին մղել հետագա աշխատանքի:	Մեծանում է շահագրգռությունը և ինքնարժևորումը, զարգանում են աշակերտի ուսումնառության նպատակներ դնելու և հետապնդելու կարողությունները:
11.	Ու-ն առաջարկում է հաջորդ քայլը կամ Ա-ի հետ քննարկում այն:	Անձի հետագա ուսուցման նպատակով ապագա անելիքները հասկանալու կարողություն. ուսումնական նպատակների վրա Ա-ի ուշադրության կենտրոնացում:	Աշխատանքի և ուսումնառության հետագա ուղիները հասկանալու կարողություն, սկզբունքի /գործընթացի ըմբռնման խորացում:
12.	Ու-ն առաջարկում կամ Ա-ի հետ քննարկում է՝ ինչ պետք է քննել հաջորդ անգամ:	Խմբային գործնական աշխատանքները ծրագրելու նպատակով ապագա անելիքները հասկանալու կարողություն:	Սկզբունքի/ գործընթացի ըմբռնման խորացում:
13.	Ու-ն Ա-ին գնահատական է նշանակում կամ աշխատանքի տվյալ հատվածի մասին ամփոփիչ եզրակացություն է տալիս, կամ գնահատականը համաձայնեցնելու համար քննարկում է Ա-ի հետ	Տեղեկություններ քաղել ամփոփիչ գնահատման համար. հայտնել որակի չափանիշը. ինքնագնահատման համար գնահատման հմտություններ ուսուցանել/ձևավորել:	Տեղեկություններ ներկայիս առաջադիմության մասին՝ նկատի առնելով հեռահար նպատակները:
14.	Ու-ն Ա-ին հավանություն է տալիս կամ ոչ	Լավացնել հարաբերություններն Ա-ի հետ, մեծացնել շահագրգռությունը:	Շահագրգռության մեծացում:

Անձնական հաղորդակցությունը՝ որպես գնահատում

Ուսուցիչներն աշակերտների հետ զրուցելու միջոցով արժեքավոր բազմաթիվ տեղեկություններ են հավաքում նրանց առաջադիմության մասին: Մենք հազվադեպ ենք այդ անձնական հաղորդակցությունը գնահատում համարում, սակայն շատ հաճախ դա հենց գնահատում է (Stiggins, 2005): Դասավանդման և ուսումնառության ընթացքում ժամանակ առ ժամանակ մենք հարցեր ենք տալիս, լսում պատասխանները և գնահատում առաջադիմությունը: Կամ ուղղորդում ենք աշակերտների միջև մտքերի փոխանակությունը, որոնք, ըստ էության, նրանց առաջադիմության մասին տեղեկություններ հաղորդող հարցազրույցներ են: Եթե մեր փոխգործողությունները նպատակային են, ակտիվ ունկնդրման բնույթ ունեն և հանգեցնում են շրջահայաց եզրակացությունների, սովորողների հետ և նրանց միջև անձնական հաղորդակցությունը կարող է դեպի ուսումնառություն տանող վավերական և արժանահավատ մի միջոց դառնալ: Դասարանում գնահատումը երբևէ ավելի մեծ վարպետություն չի պահանջում, շարունակում է Սթիգինսը, քան այն ժամանակ, երբ անձնային փոխհարաբերությունները կիրառվում են աշակերտի աճին և զարգացմանը հետևելու նպատակով: Անձնական հաղորդակցման վրա հիմնված գնահատման պարագայում վավերականությունն ու արժանահավատությունը հիմնված են այդ մեթոդը համապատասխան համատեքստում կիրառելու և ուսուցչի այդ մեթոդին բնորոշ սուբյեկտիվությունը, կողմնակալությունը հաջողությամբ հաղթահարելու կարողության վրա: Այս համատեքստում գոյություն ունեն մի գործոններ, որոնց մասին մշտապես պետք է հիշենք.

- **Ընդհանուր լեզու:** Ուսուցիչը և աշակերտը գնահատման այս մեթոդով րոյունավետորեն աշխատելու համար պետք է ընդհանուր լեզու օգտագործեն, քանի որ հակառակ դեպքում գնահատման մեջ կողմնակալությունը կարող է սողոսկել՝ ապացույցները դարձնելով անվստահելի:
- **Սովորողի անհատականությունը կարևոր է:** Ամաչկոտ, ինքնամփոփ աշակերտները, անկախ իրական առաջադիմությունից, գնահատման նման միջավայրում կարող են պարզապես չդրսևորել իրենց: Որպեսզի այս մեթոդը գործի, երկու մարդ իրար հետ պետք է շփվեն բաց հաղորդակցման եղանակով:
- **Ապահով միջավայր:** Անձնական հաղորդակցումն իբրև գնահատում լավագույնս ծառայում է միայն այն դեպքում, երբ սովորողներն զգում են, որ իրենք ուսումնառության համար ապահով միջավայրում են: Անձնական հաղորդակցման գնահատման համատեքստում ապահովությունն առկա է, երբ աշակերտներին թույլ ենք տալիս հաջողության հասնել կամ ձախողվել աննակտ, առանց նրանց ճշող, անհարմար վիճակի մեջ դնող հասարակական համընդհանուր ուշադրության:
- **Ազնվություն և անկեղծություն:** Անձնական հաղորդակցումն իբրև գնահատում լավագույնս ծառայում է այն դեպքում, երբ աշակերտները գիտակցում, համոզվում են, որ դուք՝ որպես ուսուցիչ, ավելի շատ նրանց

ազնիվ պատասխանի կարիքն ունեք, քան իրենց կարծիքով ձեզ համար ցանկալի, ընդունելի լավագույն պատասխանի: Աշակերտները պետք է գիտակցեն, որ մինչև չօգնեն մեզ տեսնել և հասկանալ իրենց ուսումնառության իրական վիճակը, մենք կդժվարանանք նրանց կարիքներին համապատասխան ուսումնառության ուղիներ առաջարկել: Նրանք պետք է հասկանան նաև, որ սարսափելի ոչինչ չկա, եթե մեր տված հարցին պատասխանում են <<Չգիտեմ>>: Դա թուլության նշան չէ. իրականում դա սովորելու պատրաստակամության նշան է:

Սթիգիսն անձնական հաղորդակցման գնահատման չորս տեսակ է առաջարկում: Դրանցից շատերն ի սկզբանե գոյություն են ունեցել դպրոցում: Բայց քանի որ ուսուցիչները դրանց շատ չեն անդրադարձել, երբեմն չեն էլ նկատել, որ գնահատում են:

Ուսուցողական հարցեր և պատասխաններ

Կրթական նպատակներով այս մեթոդի վրա հիմնվել են դեռևս Սոկրատեսից էլ առաջ: Սակայն Սոկրատեսն է, որ գնահատման և գնահատելու միջոցով նորի բացահայտման ու ուսուցման այս մեթոդը հասցրեց կատարելության: Դասավանդման ընթացքում ուսուցիչը աշակերտների համար ձևակերպում է հարցեր, որոնց նրանք պետք է պատասխանեն: Սա մտածելու և սովորելու համար լավ խթան է, նաև առաջադիմության մասին տեղեկությունների աղբյուր: Ուսուցիչը լսում է պատասխանները, դրանք մեկնաբանում ըստ չափորոշիչների, եզրակացություններ անում պատասխանողի ձեռք բերած առաջադիմության մասին և համապատասխանաբար անցնում առաջ: Գնահատման այս տեսակն ուժեղացնելու համար Սթիգիսն առաջարկում է հանգուցային մի քանի խորհուրդներ.

- Ուսուցումը սկսելուց առաջ նախապես կազմեք հիմնական հարցերը, որպեսզի ապահովեք դրանց համապատասխանությունն ուսուցման նպատակներին և սովորողների կարողություններին:
- Հստակ և կարճ հարցեր ձևակերպեք, որպեսզի աշակերտներին օգնեք իրենց ուշադրությունը կենտրոնացնել ընդունելի պատասխանների հարաբերականորեն նեղ շրջանակի վրա:
- Ըստ հանգամանքների օգտագործեք դատողությունների տարբեր տեսակներ:
- Նախ հնչեցրեք հարցը, ապա միայն տվեք պատասխանողի անունը: Սա բոլոր աշակերտների ուշադրությունն ավելի կենտրոնացած կպահի:
- Պատասխանելու համար ձայն տվեք ինչպես կամավորների, այնպես էլ ոչ կամավորներին: Սա նույնպես բոլոր աշակերտներին զգաստ վիճակում կպահի: Աշակերտների հետ միասին սահմանեք ձայն տալու կարգը և այն բաշխեք արդարացիորեն:
- Գնահատեք ճիշտ կամ լավ պատասխանները, ստուգեք սխալ պատասխանների հիմքում ընկած դատողությունները:
- Հարց ձևակերպելուց հետո սպասեք պատասխանին: Թող նրանք իմանան, որ դուք միշտ պատասխան եք ակնկալում և կսպասեք, որքան որ պետք լինի:

Որպեսզի աշակերտներին օգնենք դատողություններ անելու հմտություններ ձեռք բերել, ուսուցիչները պետք է տարբեր տեսակի հարցեր կիրառեն՝ ըստ հետևյալ աղյուսակի:

	Հարցն սկսեք հետևյալ կերպ
Վերլուծություն	Ինչպե՞ս են_ի մասերը կապվում միմյանց: Ինչպե՞ս է_ը մասերի բաժանվում: Որո՞նք են_ի բաղադրիչները/տարրերը:_ի մեջ որո՞նք են ակտիվ բաղադրիչները:
Համադրում	Ելնելով_ի և_ի մասին ձեր իմացածից ի՞նչ կպատահի, եթե դուք: Գիտելիքի ո՞ր երկու աղբյուրները պետք է միավորեք այս հիմնախնդիրը լուծելու համար:_ը և_ը ընդհանուր ի՞նչ ունեն:
Համեմատում	Ինչո՞վ են սրանք նման:Ինչո՞վ են տարբեր: Որոշեք_ի միջև եղած նմանությունները: Ինչպե՞ս է սա համապատասխանում նրան:
Դասակարգում	Ո՞ր տեսակին/կարգին է համապատասխանում սրանցից յուրաքանչյուրը: Խմբավորեք հետևյալը և յուրաքանչյուր տեսակը անվանեք: Ստորև տրված յուրաքանչյուր գրառում համապատասխանեցնենք գրառմանը:
Մակածում և արտածում	Եթե այսպիսի բան տեղի ունենար, ինչո՞վ կավարտվեր: Օգտագործելով_ի մասին ձեր իմացածը՝ լուծեք հիմնախնդիրը ի՞նչ հետևանքներ կունենար_ը: Ո՞րն է պատմվածքի հիմնական թեման կամ գաղափարը:
Արժևորում	Ձևակերպեք ձեր դիրքորոշումն այս խնդրի վերաբերյալ և պաշտպանել այն: Ձեր կարծիքով, սա որակյա՞լ աշխատանք է:Ինչո՞ւ_ին կողմից կազմակերպված սեմինարին՝ կողմ կամ դեմ փաստարկներ բերեք:

Եզրակացություն

Վերլուծելով ձևավորող գնահատման վերաբերյալ տարբեր նյութերում ներկայացված տեսակետները, ուսումնասիրելով իրականացման հնարներն ու ռազմավարությունները, համադրելով ուսուցման գործընթացում վերջիններիս կիրառման արդյունքում ձեռք բերված փորձառությունը՝ եզրակացնում ենք, որ, իրոք, ձևավորող գնահատումը կարելի է անվանել գնահատում հանուն սովորողի և ուսումնական գործընթացի բարելավման:

Գնահատումն ունի ստուգելու չափելու գործառույթ, սակայն չպետք է մոռանալ գնահատման մյուս երկու կարևորագույն գործառույթները.

- պատշաճ գնահատումը խթանում է սովորողների սովորելու ցանկությունը,
- նպաստում է ուսուցիչների կողմից դասավանդման մոտեցումների և մեթոդների կատարելագործմանը:

Վերջին մոտեցումը հատկապես կարևոր է հետահայաց պլանավորման տեսանկյունից, ըստ որի հենց գնահատման ռազմավարությամբ են որոշվում այն մեթոդները, որոնցով պետք է անցկացվի դասավանդումը: Հետևապես, գնահատումը պետք է տեսնել ոչ թե դասավանդման գործընթացից դուրս, այլ որպես դասավանդման գործընթացի կարևորագույն բաղադրիչ: Դասավանդման ընթացքում գնահատման ներդաշնակ ներառումը դժվարին, սակայն իրագործելի խնդիր է: Ընդ որում, աշակերտներին ներգրավելով գնահատման գործընթացում, իրականացվում է ավագ դպրոցի փիլիսոփայության այն հիմնարար դրույթը, ըստ որի աշակերտը պատասխանատու է սեփական կրթության համար:

Ժամանակակից կրթական ռազմավարության առաջատար ուղղություններից է դարձել կրթությունը ողջ կյանքի համար, որտեղ կարևորվում է ուսուցման փոփոխականությունն ու անհատականացումը: Դրանք համապատասխանում են սովորողի կարիքներին ու հնարավորություններին, ապահովում են կարողունակահեն մոտեցումը, ինչն էլ սերտորեն կապված է ուսուցման ակտիվ բնույթի հետ: Կրթական նոր ռազմավարությունը առավելագույնս արտահայտվում է անգլիական կրթական համակարգի կողմից ձևակերպված կարգախոսերով՝ «Վերահսկեք ձեր ուսուցումը» և «Ուսուցչի նոր դերն է՝ հետազոտող, դաստիարակ, խորհրդատու, նախագծի ղեկավար»:

Որպեսզի այս կարգախոսը գործնականում իրականացվի, իսկ մանկավարժության մեջ հեղափոխությունը դառնա անշրջելի, սովորողին անհրաժեշտ է գնահատման հասանելիություն: Այսինքն՝ ուսուցիչը, ով միշտ միայն ինքն է ունեցել ուսուցման գործընթացի վերահսկման մենաշնորհը, պետք է աշակերտի հետ կիսվի գնահատման գործիքներով, բացահայտի նրան գնահատման հիմքերը կամ չափորոշիչները և հնարավորություն տա նրան օգտագործել գնահատման արդյունքները՝ իր անձնական շահից ելնելով:

Ուսումնական գործընթացի դիտարկումն ու վերլուծությունը, ձևավորող գնահատումը թույլ են տալիս սովորողներին ավելի հաջող սովորել, իսկ ուսուցիչներին ավելի արդյունավետ դասավանդել: Դասարանում տեղի ունեցող գործընթացներին հետևելը թույլ է տալիս ուսուցիչներին ավելի ուշադիր և զգայուն հետևել, թե ինչպես է ընթանում ամենօրյա ուսուցումը: Ուսուցիչները, այսպիսով, հնարավորություն են ստանում դասասենյակը դարձնել լաբորատորիա, որտեղ նրանք ուսումնասիրում են, թե ինչպես է տեղի ունենում ուսուցումը: Արդյունքում կհասկանան այս գործընթացը և ավելի արդյունավետ կերպով ազդեն դրա վրա դասավանդման միջոցով:

Ուսուցման գործընթացի ընթացքում հետևելով սովորողներին, հավաքելով տեղեկություններ հետադարձ կապի հիման վրա և այդ ընթացքում զգույշ փորձեր կատարելով, ուսուցիչները կարող են շատ բան սովորել այն մասին, թե ինչպես են ուսանողները ընկալում նյութը և ինչպես են նրանք արձագանքում ուսուցման որոշակի մեթոդներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյան և այլք, Հասարակագիտության ոլորտում արդի հիմնահարցեր: Ձեռնարկ ուսուցիչների համար: Երևան 2005
2. Ս. Հայրապետյան և այլք, Սոցիալական հավասարությունը և արդարությունը դպրոցում: Երևան 2020
3. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին» հրամանը
4. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու մասին» նախագիծը
5. Семенчук, Л. В. Педагогическая оценка как стимул для учащегося. Эффективность педагогической оценки / Л. В. Семенчук. — Текст : непосредственный // Школьная педагогика. — 2017. — № 3 (10). — С. 6-8. — URL: <https://moluch.ru/th/2/archive/71/2694/> (дата обращения: 27.09.2023).
6. Михайлова Е.К. Братск, Россия технология формирующего оценивания как средство обеспечения качества индивидуальных учебных достижений школьников Crede Experto: транспорт, общество, образование, язык» — международный информационно-аналитический журнал No2 (09). Сентябрь 2014 (<http://ce.if-mstuca.ru/>)
7. Пинская М.А. Формирующее оценивание: оценивание в классе: учеб. пособие / М.А. Пинская. —М.: Логос, 2010. —264 с.
8. Фишман И.С., Голуб Г.Б. Ф68 Формирующая оценка образовательных результатов учащихся: Методическое пособие. Самара: Издательство Учебная литература», 2007. 244 с.
9. М.А. Пинская. Формирующее оценивание: оценивание для обучения. М.А. Пинская. Формирующее оценивание: оценивание в классе: учеб. по собие
10. Формирующее оценивание. Материалы для работы. Режим доступа: <http://iso.mz.blogspot.ru/2013/11/blog-post.html>
11. <http://www.myshared.ru/slide/469154/>
12. <https://multiurok.ru/files/strategieii-formiruiushchieho-otsienivaniia.html>